ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՐՏԱՔԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ Մ. ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Պ. Ա. ՋՈԲԱՆՅԱՆ

Մ. Գ. Ներսիսյանը իր գիտական գործունեության ընթացքում առանձնապես կարևորել է հայոց պատմության սերտորեն միմյանց հետ կապված երկու հիմնահարցի ուսումնասիրությունն, որ կարելի է ասել, կազմել է նաև նրա աշխատությունների առանցքը: Դրանք են հայ-թուրքական և հայ-ռուսական հարաբերությունների խնդիրները, որոնք վերջին հարյուրամյակներին եղել և ապագայում ևս լինելու են մեր ժողովրդի ու նրա պետության մտահոգության հիմնական հիմնահարցերը: Այդ հիմնահարցերի հետազոտումը Մ. Ներսիսյանի համար և՛ գիտական-տեսական և՛ թե գործնական նշանակություն ունեցող խնդիրներ էին: Նման հիմնահարցերին մակերեսային, օրախնդիր կամ սիրողական մոտեցումը անհանգուրժելի է, որովհետև հայոց պատմության որոշակի պահերի այն կարող է ավարտվել ժողովրդի համար խոշոր ու անդառնալի կորուստներով: Պատմության խոր ուսումնասիրությունը և միայն ճշմարտացի ներկայացումը կարող էր տալ այն նշաձողերն ու ապացույցները, որոնցով պետք է առաջնորդվեր հայ մտավորականությունը, հայ քաղաքական միտքը:

Հայ-ռուսական փոխհարաբերությունները իրենց ամբողջ ծավալով ուսումնասիրելու համար անելիքները թեև դեռևս շատ են, սակայն նրանցում կան կարևոր և լիարժեք հետազոտման բավարար հնարավորություն ընձեռող դրվագներ, որոնք, ըստ Մ. Ներսիսյանի, կարող էին կողմնորոշիչ լինել այդ հարաբերությունների ներքին տրամաբանության վերհանման և գնահատության ժամանակ: Մ. Ներսիսյանը ձգտում էր իր համոզումները ձևավորել պատմության նման դրվագների խոր ուսումնասիրության միջոցով և իր հետևությունները հիմնավորել ժողովրդի ճակատագրով մտահոգ բազում հայ գործիչների ու նաև ժողովրդական լայն զանգվածների համոզումը ներկայացնող անկանխակալ և ոչ կուսակցական դիրքորոշումների վկայակոչումներով:

Որպես հետազոտման ենթակա առաջնահերթ խնդիր Մ. Ներսիսյանը հայ-ռուսական հարաբերությունների շղթայում առանձնացրել ու դիտարկել է XVIII դարի վերջին քառորդին իրականացված Ղրիմի հայոց գաղ-

թը[1]: XIX դարի պատմության մեջ Մ. Ներսիսյանի կողմից կարևորվել են 1812 թ. հայրենական պատերազմը[2] և Կովկասի ժողովուրդների ու հասկապես հայոց վերաբերմունքը Ռուսաստանի համար դժվարադույն այդ իրադարձության նկատմամբ, դեկաբրիստական շարժումը Ռուսաստանում և Հայաստանի հետ դեկաբրիստների ունեցած կապերը՝ ռուս-պարսկական պատերազմի տարիներին[3] և այլն:

Մ. Ներսիսյանի պատմագիտական հետաքրքրությունները կազմում են ներդաշնակ մեկ ամբողջություն, նա ուներ հայոց պատմության ընթացքի ու զարգացման մասին իր կոնցեպցիան և հաճախ մեկ հարցի ուսումնասիրմանը նա ձեռնամուխ էր լինում իր առաջադրած մեկ այլ տեսակետի հիմնավորման ամրապնդման նպատակով: Այդ հետաքրքրությունների առանցքը հայոց նոր և նորագույն շրջանի պատմության մեջ ռուս - թուրքական փոխհարաբերությունների ու հակամարտության ընթացքով պայմանավորված Հայաստանին թելադրվող կամ վերադրվող դիրքորոշումներն էին և հայոց՝ սեփական դոյի, ինքնության պահպանման խնդիրը:

Մի քանի դար գտնվելով օսմանյան ու պարսկական տիրապետության ներքո, XVIII դարում դեպի Այսրկովկաս Ռուսաստանի առաջխաղացման պայմաններում հայ ժողովրդի մի ստվար հատվածը Հայաստանի ազատագրության նպատակով միանշանակ կողմնորոշվեց դեպի Ռուսաստանից օժանդակություն ակնկալելը, իսկ XIX դարում՝ Հայաստանում նրա տիրապետության հաստատման հետ կապեց իր հետագա զարգացման հարցի լուծումը:

Այդ կողմնորոշումը հայ քաղաքական մտքի համար թուրքական բռնատիրությունից ազատվելու ուղիների երկար փնտրտուքի արդյունք էր, որ հանգեցրել էր հայերի կողմից հակաթուրքական (ազատագրական) պայքարում ռուսական ուժը օգտագործելու հնարավորության գաղափարին: Հայ-ռուսական հարաբերությունները, սակայն, միանշանակ հարթ չէին կարող ընթանալ. Հայաստանը, հայտնվելով Ռուսաստանի կազմում, իր վրա էր կրելու նաև ռուսական ցարիզմի տիրապետության ողջ ծանրությունը:

Ռուսաստանը, այսպիսով, միաժամանակ և՛ ազատարար, և՛ գաղութարար էր:

Եթե մի կողմից Ռուսաստանը երաշխիք էր թուրք-պարսկական կործանարար տիրապետությունից ազատագրվելու համար, ապա մյուս կողմից Ռուսաստանը նաև ցարիզմ էր, մի տիրապետություն, որ ճնշում էր ինչպես

---

1 М. Г. Н е р с и с я н. Из истории русско-армянских отношений. Кн. I, Ереван, 1956.

2 М. Г. Н е р с и с я н. Отечественная война 1812 года и народы Кавказа. Ереван, 1965. *Մ. Ն ե ր ս ի ս յ ա ն, Դեկաբրիստները Հայաստանում. Երևան, 1958:*

3 Декабристы об Армении и Закавказье (Сборник документов и материалов), часть первая, составил и редактировал проф. М. Г. Нерсисян, Ереван, 1985.

իր, այնպես էլ հպատակ բոլոր ժողովուրդներին և որի հետևանքն էին ժողովրդական հուժկու ապստամբությունները բուն Ռուսաստանում XVIII դարում, իսկ հետո՝ դեկաբրիստների շարժումը:

Մ. Ներսիսյանը գտնում էր, որ հայոց պատմության մեջ Ռուսաստանի դերի գնահատման ժամանակ անհրաժեշտ է տարանջատել բազմաբնույթ այդ փոխհարաբերությունները և մեկի դրսևորման դեմ պայքարի անհրաժեշտության հիմնավորմամբ հարցականի տակ չդնել մյուսի գոյության ու անհրաժեշտության դիտակցումը ու առավել ևս գնահատումը: Ընդգծելով, որ Ռուսաստանը վարում էր գաղութատիրական քաղաքականություն, որ Ռուսաստանը հպատակ ժողովուրդներին փրկելու համար չէր ձեռնարկում իր նվաճողական արշավանքները, նա միաժամանակ նշում էր նաև, որ հայ ժողովուրդը գիտակցելով այդ նոր իրավիճակը, այն հակադրում և համեմատում էր մեկ այլ գաղութատիրության, որի լուծը արդեն ճաշակել էր և որը իրոք կործանարար էր հայ ժողովրդի համար: Այդ եզրահանգումները ձևավորվում էին ոչ միանդամից:

Ներսիսյանը դիտական իր առաջին վստահ քայլերը սկսել էր նարոդնիկական խմբակների ուսումնասիրությունից, սոցիալական ու ազգային պայքարի պատմության վերհանումից, որը և դարձել էր նրա թեկնածուական ատենախոսության թեման:

Ռուսահայ հատվածի պատմության ուսումնասիրությունը իրականացնելով արևմտահայության վիճակի լուսաբանման աշխատանքներին զուգահեռ, նա ակնհայտ էր դարձնում ինչպես նրանց փոխկապակցվածությունը, այնպես և զարգացման միտումների հակադիր տարբերությունը: Այդ նպատակն էր հետապնդում նրա «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ» մենագրությունը, որտեղ ի թիվս այլ հարցերի ապացուցվում է, թե 1850–70-ական թվականներին, ինչպես և հետագայում ամբողջ XIX դարում և XX դարի սկզբներին, հայ ազգային-ազատագրական շարժման հիմնական օջախը Արևմտյան Հայաստանն էր[4]:

Մ. Ներսիսյանը ձգտում էր վեր հանել այն ելակետերը, որոնք հայ ժողովրդի արտաքին կողմնորոշումների և դիրքորոշման մեջ ունեցել են էական դեր, բացատրել ժողովրդի ընտրությունը, հիմնավորել դրա տրամաբանությունը:

Ինչպես ասվեց, նման ընտրության ընդգծված դրսևորումներից էին Ղրիմից հայերի դուրս բերման քաղաքականության և անմարդաբնակ մի տափաստանում Նոր Նախիջևանի հիմնադրման նկատմամբ հայերի դրա-

4 Մ. Գ. Ներսիսյան. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, 1850–1870 թթ., Երևան, 1955, էջ 23:

կան վերաբերմունքի հարցը: Պատմական այդ փաստի ծավալուն և համակողմանի ուսումնասիրությունը առանձին խնդիր էր[5]:

Այդ իրադարձության էության ու ձևերի լուսաբանման համար Մ. Ներսիսյանը առանձնացրել է Ա. Սուվորովի գործունեությունը, նպատակասլաց ձևով հավաքված վավերագրերի ու փաստերի միջոցով շեշտել է նրա դերը այդ գործընթացում, կերտել է նրա կերպարը և միաժամանակ ներկայացրել հայազգի գործիչների հետ նրա կապն ու մտերմությունը, նրա մտահոգությունը Ղրիմից փոխադրվող բնակչության կարիքների ու հոգսերի նկատմամբ:

Առանձնացնելով Ա. Սուվորովի դերը, Մ. Ներսիսյանը ընդգծում էր նաև, թե ռուսական քաղաքականության իրականացման ժամանակ, ռուսական արքունիքի ոչ բոլոր գործիչներն ու պաշտոնյաներն էին միանշանակ տրամադիր մարդասիրություն դրսևորելու:

Ներկայացնելով ղրիմահայոց փոխադրումը Դոնի գետաբերան, Մ. Ներսիսյանը շեշտում է, որ այն չվերածվեց բռնագաղթի, այնպիսի գաղթի, որին հայ ժողովուրդը ենթարկվել էր բազմիցս: Ի հաստատումն իր այդ թեզի, նա բազմաթիվ փաստեր է թվարկում Սուվորովի գրառումներից ու դրագրություններից, և հետևություն կատարում, թե «անհիմն է որոշ պատմաբանների պնդումը, թե Ղրիմից 1778 թ. քրիստոնյաների դուրս բերումը կրել է բռնի բնույթ»[6]:

Մ. Ներսիսյանը չի գունազարդում իրավիճակը, իրատեսորեն է նայում փաստերին. «Գաղթականները ինչպես Ղրիմից Ազովի նահանգ գնալու ճանապարհին, այնպես էլ նրանց համար հատկացված նոր վայրերում գտնվելու սկզբնական շրջանում, շատ տառապանքներ, զրկանքներ ու կորուստներ կրեցին: Ցարական կառավարությունը, իր էությանը հավատարիմ, զգալի օգնություն չցուցաբերեց: Ավելին, ժողովուրդը հայտնվեց ծայրահեղ ծանր վիճակում և մեծ զոհեր կրեց ոչ միայն սովից, ցրտից և համաճարակներից, այլև պաշտոնյաների սանձարձակություններից»[7]: Ավելին, ցարական իշխանությունները պահանջեցին, որպեսզի Ռուսաստանի սահմանն անցնող գաղթականները իրենց բոլոր ապրանքների համար, բացի անասուններից, մաքս վճարեն: Տեղեկանալով այդ որոշման մասին Ա. Սուվորովը Գ. Ա. Պոտյոմկինին է դիմում այդ որոշումը մեղմացնելու, կես տարով կամ մեկ տարով հետաձգելու, իսկ չքավորների համար՝ ընդհանրապես չեղյալ հայտարարելու խնդրանքով[8]:

Ռուս աստիճանավորների մեջ Ա. Սուվորովը առանձնանում էր նաև ղրիմահայոց գաղթից հետո նրանց խնդրանքներին ընթացք տալու, նրանց

---

5 Վ. Մ ի ք ա յ ե լ յ ա ն. Ղրիմի հայկական գաղութը. Երևան, 1964: Վ. Բ ա ր խ ո ւ դ ա ր յ ա ն. Նոր Նախիջևանի հայկական գաղութը. Երևան, 1967:

6 М. Н е р с и с я н. Из истории русско-армянских отношений. Кн. I, Ереван, 1956, с. 24–25:

7 Նույն տեղում, էջ 28:

8 Նույն տեղում, էջ 29–30:

մտահոգությունները բաժանելու և ընդառաջելու առումով: Ուշագրավ է, որ նա վերահասցեագրելով հայերի խնդրագրերը, իր կողմից ոչ միայն միջնորդում էր բավարարելու նրանց խնդրանքը, այլև ըողոքները համարում էր հիմնավոր, արդարացի և իր միջնորդագրերում բացատրում և անգամ նախատում էր պաշտոնյաներին պետական կարևորություն ունեցող ձեռնարկումների նկատմամբ անտարբեր վերաբերմունքի համար: Այդպիսի փաստերը շատ են 1770–90-ական թվականների ռուսահայոց գաղթօջախին վերաբերող վավերագրերում[9]:

Այդ փաստերի արձանագրումով հանդերձ Մ. Ներսիսյանը նշում է, որ «ցարական Ռուսաստանի պայմաններում Սուվորովի հաճախակի դիմումներն ու միջնորդությունները հօգուտ գաղթականների չէին կարող քիչ թե շատ շոշափելի արդյունքներ ունենալ և էական դեր խաղալ նրանց ճակատագրում: Ավելին, ինքը Սուվորովը, լինելով ցարական գեներալ և տիրող դասակարգի վարած քաղաքականության իրականացնողներից մեկը, այդ հարցերը չէր դնում լայն և սկզբունքային: Միամիտ կլինի կարծել, թե նրան հատկապես խորն էին հուզում գաղթականների կարիքներն ու ճակատագրերը: Սակայն, չնայած դրան, չի կարելի հերքել և այն փաստը, որ մեծ զորավարը, ի տարբերություն այլ գեներալների և բարձրաստիճան անձանց, որոշ փորձեր էր կատարել Ղրիմի գաղթողների ծանր ճակատագիրը դյուրացնելու համար»[10]:

Հայ-ռուսական հարաբերություններում Ա. Սուվորովի մասնակցությունը դրսևորվեց նաև 1780 թ., սակայն այս անգամ, ինչպես որակում է Մ. Ներսիսյանը գործը վերաբերում էր ոչ թե հայկական մեկ գաղութի, ինչպես 1778–79 թթ., այլ ամբողջ հայ ժողովրդին: Օրակարգում էր դրված մեծ քաղաքական նշանակության խնդիր – Հայաստանի և ողջ Այսրկովկասի հետագա ճակատագրի հարցը: «Այդ կապակցությամբ մեծ զորավարի առջև էին դրվել լայն մասշտաբի խնդիրներ»[11]: Նշելով, որ 1770-ական թթ. վերջին և 1780-ական թթ. սկզբին ցարական Ռուսաստանի իշխող շրջանները ռուսական զորքերը կրկին Արևելյան Այսրկովկաս ուղարկելու ծրագրեր էին մշակում, հետևյալ ձևով է գնահատում դա. «Այդ ծրագիրը, որ մեծ մասով նման էր Պետրոս I-ի «պարսկական արշավանքին» լայն արձագանք գտավ ողջ Այսրկովկասում: Այն, մասնավորապես, մեծ հույսեր և սպասումներ արթնացրեց հայ քաղաքական գործիչների մոտ, որոնք ձգտում էին ռուսական զորքի օգնությամբ ազատագրել Հայաստանը պարսից խանների և թուրքական փաշաների անտանելի լծից: Ցարիզմի հետ, որ Այսրկովկասի ժողովուրդների վերաբերմամբ ընդունել էր «ազատարարի կեցվածք», կապվում էին ոչ քիչ պատրանքներ: Սակայն ցարական կառավա-

9 Նույն տեղում, էջ 30-34 և հետո:

10 Նույն տեղում, էջ 34-35:

11 Նույն տեղում, էջ 43:

ությունը, հասկանալի է, հետապնդում էր ոչ թե ազատագրական, այլ իր դասակարգային նվաճողական նպատակները: Սակայն ռուսական զորքերի նախատեսվող արշավանքը Անդրկովկաս օբյեկտիվորեն կարող էր ունենալ առաջադիմական նշանակություն, քանզի այն ժամանակ (ընդգծ. մերն է - Պ. Զ.) ստեղծված քաղաքական ծանր պայմաններում Անդրկովկասյան ժողովուրդների համար լավագույն ելքը Անդրկովկասի միացումն էր Ռուսաստանին»[12]:

Շարադրելով ռուս-թուրքական փոխհարաբերությունների պատմությունը, Մ. Ներսիսյանը չի որդեգրում երկու նվաճողներին միանշանակ դատապարտելու հեշտ ուղին: Նա շեշտում է այն հանգամանքը, որ Ռուսաստանի վարած քաղաքականությունը իր էությամբ ուղղված էր ոչ թե նվաճվող ժողովուրդների, այլ՝ նրանց հետ դաշինքի միջոցով՝ ավելի վտանգավոր նվաճողի դեմ: Դրանով է պայմանավորված Ռուսաստանի հանդուրժողական, երբեմն մարդասիրական վերաբերմունքի դրսևորումը մասնավորապես հայ ժողովրդի այն հատվածի նկատմամբ, որը գտնվում էր ռուսական պետության սահմաններում՝ ունենալով տնտեսական ու մշակութային գործունեության համեմատաբար լայն հնարավորություններ: Ավելին, «Հայաստանը առանց հայերի» ունենալու մասին դրույթը, որ վերադրվում էր Ռուսաստանին, Ներսիսյանը համարում է անգլիական դիվանագիտության հորինվածք, և «...Լոնդոնում ստեղծված հեքիաթը,-ըստ Մ. Ներսիսյանի,- օգտագործեցին հատկապես հայ բոլշևիկները... Նրանք ոչ միայն դարասկզբին, այլև ավելի ուշ՝ 1920–30-ական թթ. ...բացահայտորեն միակողմանի, ամենասև գույներով ներկայացրին Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը Մերձավոր Արևելքում»[13]: Հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումը անցողիկ հրապուրանք չէր և նա կամավորական շարժումներով բազմիցս իր մասնակցությունն էր բերել Ռուսաստանի քաղաքականության իրականացման գործում[14]: Հայաստանում Թուրքիայի և Ռուսաստանի վարած քաղաքականության ու նրանց նպատակների տարբերությունը պայմանավորված էր ոչ թե ժողովուրդների էությամբ, այլ այդ պետությունների զարգացման և նրանց հետագա ճակատագրի տրամաբանությամբ ու սպասելիքների հեռանկարով: Եթե Ռուսաստանին գայթակղում էր ծավալման տնտեսական ու քաղաքական շահը, ապա Օսմանյան կայսրության հետադա դոյատևումը ակնհայտորեն լինելով հարցականի տակ, թուրք կառավարողներին պարտադրում էր մտահոգվել թուրքական նոր

---

12 Նույն տեղում, էջ 44: Այդ թեզը իր հիմնավորումն ստացավ նաև "Армяно-русские отношения во второй половине XVIII века" (Ереван, 1990) *վավերագրերի ժողովածուի մեջ, որ կազմվել է Մ. Գ. Ներսիսյանի ղեկավարությամբ ու հրապարակվել նրա խմբագրությամբ, և որի առաջաբանում նա ամփոփել է այդ հարցի մասին իր գրույթները:*

13 Մ. Գ. Ներսիսյան. Պատմության կեղծարարները, Երևան, 1998, էջ 83:

14 М. Г. Нерсисян. Армянские волонтеры в русско-турецкой войне 1787-1791 годов,- *ՊԲՀ, 1979, N 3 (86), էջ 105-111.*

պետության ստեղծման խնդրով: Օսմանյան պետության հետագա գոյությունը անհամատեղելի և հակադիր էր կայսրության հպատակ ընիկ ժողովուրդների գոյության փաստին: Օսմանյան կայսրության փլուզման դեպքում թուրքական նոր պետության ստեղծման ճանապարհին թուրք գործիչները այլընտրանք չէին տեսնում, եթե ոչ կամ որոշակի տարածքի բնակչության թուրքացում կամ ազատագրական պայքարի ելած բնակչության բնաջնջում: Վերջին միջոցին դիմեցին երիտթուրքական իշխանությունները նոր Թուրքիայի ստեղծման համար: Այդ թեզի ճշմարտացիության հիմնավորմանն էր նվիրված «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրության մեջ» վավերագրերի ու նյութերի ժողովածուն, որ կազմվեց և հրատարակվեց Մ. Ներսիսյանի ղեկավարությամբ[15]: Հաջորդ փուլը, որ անհրաժեշտ էր պատմության անաչառ ուսումնասիրությունը իրականացնելու ճանապարհին, դա պատմության կեղծարարների բացահայտման ու կեղծարարությունների մեկնաբանման աշխատանքն էր, որ նա կատարել էր տարբեր առիթներով և ապա կյանքի վերջին տարում հրապարակել առանձին ժողովածուի տեսքով, որով և Մ. Ներսիսյանը եզրափակեց իր դիտական ու քաղաքացիական առաքելությունը[16]:

Գիտական իր դիրքորոշումն ու համոզումները Մ. Ներսիսյանը չէր պայմանավորում ԽՍՀՄ-ի կազմում Հայաստանի գտնվելու հանգամանքով, այդ ոչ թե պարտադրանք էր, այլ պատմաբան-գիտնականի հստակ կեցվածք: Նա Հայաստանի այսօրվա անկախության հռչակումից հետո, մտահոգ լինելով հանդերձ Հայաստանի տնտեսական փլուզմամբ, չէր բաժանում «Հայաստանը Ռուսաստանի մարզ կամ նահանգ» դարձնելու տարբերակը, որպիսին երբեմն առաջարկվում էր ոմանց կողմից, այլ պահանջում էր միայն արտաքին քաղաքականության մեջ լինել առավել չափով հավասարակշիռ և թույլ չտալ ծայրահեղ, անհաշվենկատ ու վնասակար որդեգրումներ: Իր այդ դիրքորոշումը նա ձգտում էր լսելի դարձնել ինչպես կառավարությանը, իշխանություններին, այնպես էլ մտավորականության լայն շրջաններին ու, առաջին հերթին՝ ԳԱԱ համակարգում՝ Այդ առումով բնութագրական է նրա վերաբերմունքը 1997թ. օգոստոսի 29-ին Մոսկվայում կնքված հայ-ռուսական «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության» պայմանագրի նկատմամբ, որը նրա մեջ հույսեր էր արթնացրել, թե Հայաստանի Հանրապետությունը այսուհետ ևս չի հայտնվի դիվանագիտական ու ռազմա-քաղաքական մեկուսացման մեջ[17]:

---

15 Геноцид армян в Османской империи (Сб. док. и материалов.), Ереван, 1966, 561 с. Լրացված վերահրատարակությունը՝ Երևան, «Հայաստան», 1983, 685 էջ՝ Հայերեն հրատարակությունը՝ Երևան, «Հայաստան», 1991, 758 էջ:

16 Մ. Գ. Ն ե ր ս ի ս յ ա ն. Պատմության կեղծարարները (Հոդվածներ և հաղորդումներ), Երևան, «Գիտություն», 1998, 343 էջ:

17 Մ. Ն ե ր ս ի ս յ ա ն. Պատմական մեծ իրադարձություն,-տե՛ս Պատմության կեղծարարները, էջ 204-211:

Հայրենի կառավարության ներքին քաղաքականության նկատմամբ դժգոհությունը նրա մոտ չվերածվեց ատելության, նա մնաց ու հանգավ որպես կրքոտ հայրենասեր: Պետության քաղաքականությունը քննադատելով, նա նաև պետության ջերմ պաշտպանն էր՝ պետականության օրենքները և՛ հարգելու, և՛ իրականացնելու համոզված պատրաստակամությամբ:

Մ. Գ. Ներսիսյանը ոչինչ չտարավ իր հետ, ունեցածը անմնացորդ տվեց իր ժողովրդին և միակը, որ տարավ իր հետ, դա հայ ժողովրդի ճակատագրի, նրա հետագա գոյության և անվտանգության համար պատմաբան-քաղաքացու իր խոր մտահոգությունն էր: